

- խմբաքանակի համարը, արտադրման թվականը,
- խմբաքանակում սալերի քանակը,
- խտության, ամրության սահմանների և խոնավության ստուգման արդյունքները,
- սույն տեխնիկական պայմանների նշագիրը:

5.4 Սույն տեխնիկական պայմաններով սահմանված պահանջներին համապատասխանությունը ստուգելու համար արտադրողը պետք է իրականացնի սալերի ընդունման-հանձնման և պարբերական փորձարկումներ:

Ընդունման-հանձման փորձարկումների ժամանակ ստուգում են սալի չափերը, ձևը, արտաքին տեսքը, խտության և ամրության սահմանները, ինչպես նաև խոնավությունը:

5.5 Չափերը, ձևի, արտաքին տեսքի ստուգման համար խմբաքանակի տարբեր մասերից ընտրում են հինգ փորձանմուշ: Եթե այդ փորձանմուշներից թեկուզ մեկը չի բավարարում սույն տեխնիկական պայմաններով սահմանված պահանջներին, ապա կատարում են նույն խմբաքանակից վերցրած կրկնապատկված քանակով նմուշներ այդ ցուցանիշները նորից ստուգելու համար: Եթե կրկնական ստուգումների արդյունքում հայտնաբերվում են սույն տեխնիկական պայմաններով սահմանված պահանջները չբավարարող սալեր, ապա կատարում են խմբաքանակի յուրաքանչյուր սալի ստուգում նշված ցուցանիշներով:

5.6 Ըստ 5.5 կետի ստուգումներով՝ սույն տեխնիկական պայմանների պահանջները բավարարող, սալերի թվից ընտրում են երեք նմուշ խտության, ամրության և խոնավության ցուցանիշների որոշման համար:

5.7 Խտության, ամրության ու խոնավության ցուցանիշներից թեկուզ մեկ ցուցանիշի անբավարար արդյունք ստանալու դեպքում կատարում են ըստ այդ ցուցանիշների, կրկնական փորձարկումներ, փորձարկման ենթարկելով նույն խմբաքանակից կրկնապատկված քանակով՝ 5.5 կետի ստուգումներով ընդունված, փորձանմուշներ: Կրկնական փորձարկումների անբավարար արդյունքների դեպքում խմբաքանակն ընդունման ենթակա չէ:

5.8 Սալերը ենթարկվում են պարբերական փորձարկումների՝ ըստ ջերմահաղորդականության և ձայնակլանման: Պարբերական փորձարկումներ կատարում են տարին մեկ անգամ ու հումքի և(կամ) սալերի արտադրման տեխնոլոգիայի փոփոխման դեպքում: Պարբերական փորձարկման ենթակա են 5.6 և 5.7 կետերով ընդունման- հանձման փորձարկումներ անցած երեքից ոչ պակաս փորձանմուշ: